«ԵՐԵՎԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»

ՊՈԱԿ-ի

ՈՒՍԱՆՂԱԿԱՆ ՆՊԱՍՏ ԵՎ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐՄԱՆ ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2021

Քննարկված և հաստատված է
« Երևանի մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի 2021թ. ապրիլի 14-ի N 4 որոշմամբ:

ԿԱՐԳ
«ԵՐԵՎԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՏԱԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը բխում է ՀՀ կառավարության 2013թ. նոյեմբերի 28-ի «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2007թ. մարտի 1-ի N297-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1330-Ն որոշման պահանջներից և նպատակ ունի կանոնակարգելու «Երևանի մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ Քոլեջ) ուսանողական նպաստի, պետական կրթաթոշակների նշանակման և տրամադրման գործընթացը:

II. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

1. Ուսանողական նպաստը փոխհատուցում է (լրիվ կամ մասնակիորեն) ուսանողի ուսման վճարը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

2. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է՝

1) մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով.

2) օրենքով սահմանված հետևյալ սոցիալական խմբերին՝

ա. առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

բ. 1-ին ու 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխաների կարգավիճակ ունեցող անձանց՝ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

գ. զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին՝ համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

3) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին:

3. Առանց ծնողական խնամքի մնացած և նրանց թվին պատկանող անձանց, զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին ուսանողական նպաստներ տրամադրվում են առաջին կուրսից մինչև ծրագրի ավարտը, իսկ 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին ու հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին ուսանողական նպաստները համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում տրվում են առաջին կուրսի սկզբում և վերանայվում յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար նախատեսված միջոցների սահմաններում, ըստ միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների, սահմանում է պետության կողմից տրվող ուսանողական նպաստ ստացող ուսանողների թիվը, որը պահպանվում է այդ ուսանողների ամբողջ ուսումնառության ընթացքում:

5. Առաջին կուրսում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրամադրվում է Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ընդունելության կանոններով՝ սահմանված կարգով միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունված ուսանողներին:

6. Հաջորդ կուրսերում ուսանողական նպաստ տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով:

7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը կարող է վճարովի հիմունքներով սովորող ուսանողական համակազմի մինչև տասը տոկոսին, ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հաշվառմամբ, իր միջոցների հաշվին մասնակիորեն փոխհատուցել ուսման վճարը՝

1) սոցիալական անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին,

2) միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին,

3) 3 և ավելի անչափահաս կամ 3 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին,

4) վճարովի ուսուցման համակարգում երկու և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին,

5) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամ ծնողներ ունեցող ուսանողներին,

6) հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա-ուսանողներին,

7) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին,

8) ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված՝ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատության հայեցողությամբ,

9) միջին մասնագիտական ուսումնական հաստատության հայեցողությամբ՝ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին:

8. ՈՒսանողական նպաստներ տալու գործառույթներն իրականացնում է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը:

9. Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստներ ստանալու մասին դիմումներն ընդունվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը ընկած ժամանակահատվածում:

10. Պետության կողմից ուսանողական նպաստ տրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից չֆինանսավորվող ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստներ հատկացնելու մասին որոշումն ընդունում է հիմնադիրը:

11. Հարգելի պատճառներով (ակադեմիական արձակուրդ՝ առողջական վիճակի կամ զինծառայության) միջին մասնագիտական ուսումնական հաստատությունից ազատված ուսանողը վերականգնվելիս՝ պահպանում է նախկինում ունեցած՝ ուսանողական նպաստ ստանալու իրավունքը:

12. Նպաստառու ուսանողի սոցիալական վիճակի փոփոխության դեպքում՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատության կողմից տրամադրվող ուսանողական նպաստը կարող է փոփոխվել:

13. ՈՒսանողական նպաստներ տալու գործընթացի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է պետական կառավարման լիազորված մարմինը:

III. ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

14. Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է, որը մրցութային կարգով ուսանողներին տրվում է գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար (արվեստի բնագավառի միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ նաև մասնագիտական մրցույթ-ստուգատեսների հաղթողներին): ՈՒսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներն են համարվում՝

1) մասնակցությունն ուսումնական հաստատության ուսանողական, հասարակական աշխատանքներին,

2) զեկուցումները, ռեֆերատները, հրատարակված աշխատանքները (գիտական ամսագրերում և զանգվածային լրատվության միջոցներում),

3) մասնակցությունը միջքոլեջային, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին,

4) այլ հասարակական և ստեղծագործական նախաձեռնություններ՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատության հայեցողությամբ:

15. Սույն կարգի իմաստով ուսանողների պատշաճ վարքագիծը միջին մասնագիտական ուսումնական հաստատության ներքին կանոնների պահպանումն է:

16. Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարի, Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար նախատեսված միջոցների սահմաններում, ըստ միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների հաստատում է պետական կրթաթոշակների թիվը և չափը:

17. Պետության կողմից կրթաթոշակ տրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից չֆինանսավորվող ուսումնական հաստատություններում կրթաթոշակի հատկացման մասին որոշումն ընդունում է հիմնադիրը:

18. ՈՒսանողի՝ պետական կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին՝ համաձայն սույն կարգի 14-րդ կետով նախատեսված պայմանների: Նախատեսված պայմանները չապահովելու դեպքում ուսանողը զրկվում է պետական կրթաթոշակից: Պետական կրթաթոշակից զրկված

ուսանողը կարող է ընդգրկվել ուսումնական նպաստառուների համակարգում սույն կարգի 2-րդ կետի պահանջները բավարարելու դեպքում:

19. Պետական կրթաթոշակների չօգտագործված մասը հատկացվում է սույն կարգի 12-րդ կետի պահանջները բավարարող ուսանողներին՝ մրցութային կարգով:

20. Հարգելի պատճառներով (ակադեմիական արձակուրդ՝ առողջական վիճակի կամ զինծառայության) միջին մասնագիտական ուսումնական հաստատությունից ազատված ուսանողը վերականգնվելիս՝ պահպանում է նախկինում ունեցած՝ կրթաթոշակ ստանալու իրավունքը:

21. Պետական կրթաթոշակների ձևակերպման գործընթացն իրականացնում է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը:

22. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը կարող է սեփական միջոցների հաշվին սահմանել ներքոլեռային կրթաթոշակներ: